“ՍՈՎՈՐԻՐ ԱՅԹԻ” ՍՊԸ
Էլ. հասցե - sovorir.it@gmail.com
Հեռախոսահամար - +37444240202

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հրապարակային պայմանագիր

Թարմացվել է *27.01.2024*

1. Հիմնական պայմաններ

«Սովորիր Այթի» ՍՊԸ-ն, որը գործունեություն է իրականացնում **Sovorir IT** ապրանքանիշի ներքո, համագործակցելով մասնագետների, փորձագետների, իրավաբանական, ֆիզիկական կամ այլ անձանց հետ, կազմակերպում և/կամ իրականացնում է առցանց դասընթացներ, միջոցառումներ, վեբինարներ, մասնագիտական քննարկումներ:

Խնդրում ենք ծանոթանալ սույն պայմաններին: Այս պայմանները կարգավորում են Ձեր հարաբերությունները Sovorir IT-ի և ընկերության անվան տակ գործող այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ, ովքեր ընկերության անվան տակ անցկացնում կամ ներկայացնում են տարատեսակ միջոցառումներ, վարպետության դասեր, մասնագիտական քննարկումներ և այլ կրթական ծառայություններ:

Ձգուշացնում ենք, որ Sovorir IT-ի և իր ուսանողների, գործընկերների կամ այլ ձևաչափով համագործակցության մեջ մտած սուբյեկտների և օբյեկտների հետ հարաբերությունները կարգավորվում են բացառապես սույն պայմանագրով: Տվյալ պայմանագրային կետերին ծանոթ չլինելը չի ենթադրում տվյալ պայմանգրում նշված պարտավորություններից և պատասխանատվությունից ազատում:

Տեղեկացնում ենք, որ սա կլինի **պարտավորեցնող** համաձայնագիր Ձեր և Sovorir IT-ի միջև, ինչը ենթադրում է ընկերության որևէ ծառայությունների կամ ապրանքի համար սոցիալական հարթակներում կամ դրան կից/պատկանող այլ հարթակներում, ռեսուրսներում, հեռախոսազանգի, տեսազանգի, ՆԱԽԱԳՐԱՆՑՄԱՆ կամ ԳՐԱՆՑՄԱՆ ընթացքում «Համաձայն եմ ծառայությունների մատուցման պայմաններին», «Համաձայն եմ ծառայությունների մատուցման հրապարակային պայմանագրին և գաղտնիության քաղաքականությանը», «Համաձայն եմ կանոններին» կամ վերոնշյալ միտքը կրող սակայն այլ ձևակերպում ունեցող նամակագրության կամ գնման ժամանակ, ծառայությունների կամ ապրանքների

ստացման համար այլ ձևաչափով համաձայնություն տալուց կամ առաջարկվող ծառայությունների կամ ապրանքներից որևէ մեկի համար կանխավճար, մասնակի վճար կամ ամբողջական վճարում կատարելուց անմիջապես հետո (այսուհետև՝ գրանցում): Եթե համաձայն չեք այս պայմաններին, խնդրում ենք դադարեցնել գրանցումը կամ չեղարկել այն ըստ այս պայմանագրում նշված ընթացակարգի:

2. Պայմանագրում օգտագործված հիմնական հասկացությունները

Հրապարակային պայմանագիր՝ Sovorir IT-ի և Հաճախորդի միջև կնքվող առցանց դասընթացների, միջոցառումների, վեբինարների, վարպետության դասերի, մասնագիտական քննարկումների կամ այլ ծառայությունների ձեռքբերմանը կամ մասնակցությանը կայքի (հարթակների) ցանկացած ձևաչափով տրամադրվող նյութերի օգտագործմանը և մեր կողմից մատուցվող Ապրանքների/Ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու մասին պայմանագիր:

Օգտագործող, Օգտատեր կամ Հաճախորդ՝ (այսուհետ՝ «Դուք», «Ձեզ», «Ձեր») ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ԱՁ, այդ թվում ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ԱՁ, որը Sovorir IT-ի հետ կնքել է Պայմանագիր, այդ թվում ցանկացած ձևաչափով համաձայնություն է տվել ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ դասընթացների, միջոցառումների, վեբինարների, մասնագիտական քննարկումների մասնակցության, կայքի (հարթակների)՝ ցանկացած ձևաչափով տրամադրվող նյութերի օգտագործման, Sovorir IT-ի կողմից նախապես հայտարարված և սահմանված պայմանների ու կանոնների համաձայն մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու վերաբերյալ:

Գործընկեր կամ Ծառայություններ մատուցող անձ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ԱՁ, ով Sovorir IT-ի հետ կնքել է պայմանագիր վաճառվող ապրանքների և/կամ կատարվող աշխատանքների և/կամ մատուցվող ծառայությունների դիմաց:

Sovorir IT (այսուհետ նաև՝ «Մենք», «Մեր»)՝ առցանց հանդես եկող հարթակ, ապրանքանիշ, որն առաջարկանում է կրթական Ապրանքներ և/կամ Ծառայություններ, որի համար կարող է օգտագործել նաև 3-րդ հարթակ, օրինակ՝ **Telegram** հարթակը:

Կայք՝ Sovorir IT-ի կողմից առաջարկվող Ծառայությունները և/կամ Ապրանքները ներկայացնող համացանցային կայք, որը գրանցված է sovorir-it.am դոմենային հասցեով, կայքը կարող է ունենալ ենթադոմեններ, կամ այլ անուն կրող դոմեններից վերահասցեավորումներ, օրինակ՝ **https://sovorir.it/shop/**:

Հարթակ՝ Առցանց ձևաչափով հանդես եկող միջավայր, որի շրջանակներում Դուք գրանցվում, վճարում և ցանկացած ձևաչափով օգտվում եք Sovorir IT-ի կողմից

առաջարկվող ծառայություններից և/կամ ապրանքներից:

Ակցիա կամ հատուկ առաջարկ՝ Sovorir IT -ի կողմից անցկացվող միջոցառում, որն ուղղված է առաջարկվող Ապրանքների և/կամ Ծառայությունների իրացմանը, որի ժամանակ զեղչվում կամ այլ հատուկ պայմաններով են մատուցվում որոշակի ապրանքատեսակներ, աշխատանքների կամ ծառայությունների մատուցման արժեքներ: Հատուկ առաջարկները ունեն ավարտի ժամկետ:

Ակցիայի կամ հատուկ առաջարկի անցկացման ժամանակաշրջան՝ ժամանակաշրջան, որի ընթացքում Sovorir IT-ն Օգտատերերին հատուկ պայմաններով Ապրանքներ և/կամ Ծառայություններ ձեռք բերելու հնարավորություն է ընձեռում:

Վճարում՝ Օգտատերերի կողմից դրամական պարտավորության կամ այլ վճարման կատարում:

Անձնական տվյալ՝ Ձեզ վերաբերող ցանկացած տվյալ կամ տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ձեր ինքնությունը: Մշակման ենթակա տվյալների ցանկը ներառում է Ձեր կողմից տրամադրված և հանրամատչելի կամ բաց աղբյուրներից ձեռք բերված անձնական տվյալները:

Անձնական տվյալների մշակում՝ ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է Անձնական տվյալները հավաքելու, ամրագրելու, մուտքագրելու, համակարգելու, կազմակերպելու, կուտակելու, պահպանելու (մասնավորապես՝ Sovorir IT-ի կողմից օգտագործվող ծրագրային ապահովումներում, վարվող հաշվետվություններում, զեկույցներում և այլ տվյալների բազաներում), փոփոխելու (թարմացում կամ վերափոխում), արտածելու, օգտագործելու, ապանձնավորելու, արգելափակելու, հեռացնելու, ջնջելու, ոչնչացնելու, ուղեփակելու, վերականգնելու, ուղղելու, ինչպես նաև ցանկացած եղանակով փոխանցելու (տարածում, հասանելիության ապահովում) հետ՝ անկախ իրականացման ձևից և եղանակից, այդ թվում՝ ավտոմատացված, մեխանիկական, համակցված, տեխնիկանական ցանկացած միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց:

Մտավոր սեփականություն կամ ՄՍ՝ ցանկացած մտավոր սեփականություն՝ գրանցված կամ չգրանցված, պատկանող կամ այլ կերպ սեփականատիրոջ տնօրինության տակ գտնվող, ներառյալ բոլոր հեղինակային իրավունքները, արտոնագրերը, արտոնագրային իրավունքները, առևտրային նշանները, արդյունաբերական նմուշները, որոնք հանդիսանում են սեփականություն:

Սեփականատեր (ընկերություն/կատարող)՝ <<Սովորիր.ԱյԹի>> ՍՊԸ, ՀՎՀՀ - 08253409, գրանցման համար - 271.110.1312115:

3. Գրանցում

Մեր ծառայություններից/ապրանքներից օգտվելու համար Դուք կպարտավորվեք Ձեր տվյալները Մեզ փոխանցել Մեր կողմից սահմանված այլ ձևաչափով՝ մեր Facebook-յան կամ Instagram-յան էջերին՝ https://www.facebook.com/sovorir.it.armenia, https://www.instagram.com/sovorir.it/, ընկերության կողմից սահմանված էլ. հասցեին՝ sovorir.it@gmail.com, կամ +3744240202 հեռախոսահամարով ընկերության համապատասխան բաժնի աշխատակցին հեռախոսազրույցի ընթացքում, որոշ դեպքերում ֆիզիկական հաղորդակցության կամ մեր կողմից սահմանված հաղորդակցության այլ ուղիների միջոցով, օրինակ՝ Telegram-յան աջակցման կենտրոնին՝ https://t.me/SovorirITsupportgroup: Տվյալները համարվում են փոխանցված երբ Դուք Մեր կողմից ստանում եք գրավոր կամ բանավոր հաստատում, այդ թվում ավտոմատ եղանակով:

4. Վճարում և չեղարկում

Յուրաքանչյուր Ծառայության և/կամ Ապրանքի կամ դրանց խմբի գնի մասին տեղեկատվություն կարող եք ստանալ մեր Facebook-յան, Instagram-յան էջերից՝ նամակագրության միջոցով, որոշ դեպքերում գնի մասին տեղեկատվությունը Ձեզ կփոխանցվի էլ նամակի, հեռախոսազանգի կամ մեր կողմից սահմանված հաղորդակցության այլ ուղու միջոցով: Սահմանված գինը ծառայությունների/ապրանքի մատուցման/տրամադրման **ընթացքում** փոփոխության **ենթակա չէ** և տվյալ պայմանագրում որևէ այլ փոփոխություն կատարելու դեպքում չի կարող փոխվել այս կետը: Ծառայությունների գինը կարող է փոխվել յուրաքանչյուր այլ խմբի, նախագծի, ծառայությունների կամ ապրանքի մատուցման սկզբի համար, հնարավոր է սահմանվեն ծառայությունների արժեքի աճի կամ նվազման ժամկետներ մինչև ապրանքի կամ ծառայության մատուցումը, սակայն սա երբեք չի վերաբերի սահմանված գնով ծառայությունը կամ ապրանքը ձեռք բերած օգտատիրոջը:

Վճարում իրականացնելու համար Դուք պետք է նշեք Ձեր բանկային քարտի, որոշ դեպքերում բանկային հաշվեհամարի կամ առցանց դրամապանակի ճիշտ տվյալները, ինչպես նաև Ձեր այն հեռախոսահամարը, իսկ որոշ դեպքերում էլ. հասցեն, կամ ըստ պահանջի Ձեր անձնական այլ ճիշտ տվյալները, որով գրանցվել եք Ծառայությունը և/կամ Ապրանքը Ձեռք բերելու նպատակով, որպեսզի կարողանաք վճարել Ծառայությունների և/կամ Ապրանքի համար:

Վճարումը կատարվում է «Telcell», «EasyPay», «IDram» տերմինալների, նույնանուն հեռախոսային հավելվածների, բանկային կամ միջազգային փոխանցումների միջոցով:

Վճարման բոլոր դեպքերում պետք է ճշգրիտ լրացնեք Ձեր այն հեռախոսահամարը, էլ հասցեն, անուն/ազգանունը, իսկ իրավաբանական անձանց, ԱՁ-ների դեպքում՝ ընկերության ռեկվիզտիները կամ այլ տվյալները, որով գրանցվել կամ ցանկանում եք գրանցվել Ծառայությունները և/կամ Ապրանքը ձեռք բերելու նպատակով, հակառակ դեպքում առաջացած խնդիրների համար Մենք պատասխանատվություն չենք կրում:

Վճարումը կատարելու համար անհրաժեշտ է հետևել հրահանգներին և լրացնել ճիշտ տեղեկատվություն:

Տեղեկացնում ենք, որ փոխանցումը կատարելու ժամանակ կարող են խնդիրներ առաջանալ Ձեր բանկային հաշվի և/կամ այլ էլեկտրոնային գործարքներ իրականացնող համակարգի և/կամ դրանց կից, Ձեր հաշվի հետ: Այս դեպքերում Դուք պետք է կապվեք Ձեր բանկի կամ այլ էլեկտրոնային ծառայություններ առաջարկող ընկերության հետ, լուծեք խնդիրը և կրկին փորձեք վճարում իրականացնել:

Կայքում կամ մեր կողմից սահմանված այլ ձևաչափով ներկայացված Ծառայությունների և/կամ Ապարանքերի համար նշված գումարը պետք է ստացվի ամբողջությամբ կամ ըստ նշված փուլերի, եթե դրանք առկա են՝ այն դեպքում, երբ Ձեր բանկը կամ վճարահաշվարկային կազմակերպությունը վճարման համար գանձում է որևէ լրացուցիչ գումար, Դուք պարտավորություն եք կրում վճարել նաև միջնորդավճարները կամ տվյալ ընկերությունների կողմից ծառայությունների մատուցման այլ վճարները, եթե դրանք առկա են:

Տեղեկացնում ենք, որ վճարման պահ է համարվում Մեր բանկային հաշվին գումարի փաստացի մուտքագրման և այն մեզ տեսանելի դառնալու պահը, ինչպես նաև հարկ է նշել անդորրագրի ստացման և ուղարկման փաստը որի միջոցով հենց տվյալ պահին կատարվում են դասընթացի/ պրոդուկտի համար ամրագրումները:

Եթե առկա են Ծառայությունների և/կամ Ապրանքի ձեռքբերման ընթացիկ վճարումներ, ապա դա պետք է կատարվի սահմանված օրը և սահմանված ընթացակարգով, որը ներկայացված է Կայքում կամ Մեր կողմից սահմանած այլ ձևաչափով, կոմունիկացիոն ուղիներով, հակառակ դեպքում, սահմանված օրից 48 ժամ անց Մենք իրավասու ենք արգելափակել Ձեր մասնակցությունը տվյալ դասընթացին և վերականգնել Ձեր մասնակցությունը Ձեր կողմից վճարումը կատարելուց հետո՝ 48 ժամերի ընթացքում, վճարումը ժամկետից 48-72 ժամ անց չկատարելու դեպքում Ձեր մասնակցությունը տվյալ դասընթացին կդադարեցվի:

Եթե որևէ պատճառով Դուք որոշում եք կայացնում դադարեցնել Մեր կողմից մատուցվող Ծառայությունների և/կամ Ապրանքի մատուցման գործընթացը Ծառայությունների և/կամ Ապրանքի ձեռքբերումից հետո, ապա՝

1. Ծառայությունը մատուցվում է նախօրոք տեսաձայնագրված տեսանյութեր տրամադրելու և այլ նյութերի տրամադրման ձևաչափով, ապա Ձեր կողմից Ծառայությունների ստացման նպատակով Telegram-յան հատուկ փակ բոտում գրանցվելու պահից հետո, անկախ Ձեր տվյալների ստուգման (մոդերացիաի կարգավիճակից), անկախ նրանից՝ Դուք քանի տեսաձայնագրություն եք դիտել կամ չեք դիտել, ընդհանրապես, գումարը ետվերադարձի ենթակա չէ:

Գումարը ետվերադարձի ենթակա է միայն մեկ դեպքում. եթե Դուք չստանաք Ձեր դասընթացը: Հատուկ ցանկանում ենք նշել՝

ա) Sovorir IT-ն իրավունք ունի սահմանել տեսաձայնագրությունների ընդհանուր տևողություն և տրամադրել փաստացի +/- 50% տևողության շեղումով տեսաձայնագրություններ, սակայն դա չի կարող հանդիսանալ ծրագրում նախօրոք ներկայացված բաղադրիչների փոփոխության կամ թերի մատուցման պատճառ և չի կարող համարվել անհամապատասխանելիություն ծրագրի հետ:

բ) Ծրագրում նախօրոք ներկայացված որոշ բաղադրիչներ կարող են տեսաձայնագրությունները պատրաստելու կամ դրանց տրամադրման ընթացքում դուրս գալ կիրառելիությունից կամ անիմաստ դառնա վերջիններիս կիրառելիությունը, ուստի հնարավոր է դրանք հեռացվեն փաստացի տրամադրվող նյութերից կամ փոփոխվեն: Սակայն դա չի կարող հանդիսանալ ծրագրում նախօրոք ներկայացված բաղադրիչների թերի մատուցման պատճառ և չի կարող համարվել անհամապատասխանելիություն ծրագրի հետ:

գ) Ծրագրում նախօրոք ներկայացված որոշ բաղադրիչներ կարող են տրամադրվել խառը հերթականությամբ, իհարկե, ապահովելով տրամաբանական կապը, սակայն դա չի կարող հանդիսանալ ծրագրում նախօրոք ներկայացված բաղադրիչների փոփոխության կամ թերի մատուցման պատճառ և չի կարող համարվել անհամապատասխանելիություն ծրագրի հետ:

դ) Ծրագրում սահմանված բաղադրիչները կարող են տրամադրվել ինչպես տեսաձայնագրությունների, այնպես էլ պրեզենտացիաների, գործնական աշխատանքների, նյութերի, ուղեցույցների, ձևանմուշների տեսքով կամ այլ ձևաչափով: Սակայն դա չի կարող հանդիսանալ ծրագրում նախօրոք ներկայացված բաղադրիչների փոփոխության կամ թերի մատուցման պատճառ և չի կարող համարվել անհամապատասխանելիություն ծրագրի հետ:

ե) Հնարավոր է Ձեր կողմից ներդրված ոչ համապատասխան ջանքերի, պատասխանատվության, կենտրոնացման, ժամանակի կամ Ձեր մտավոր և մասնագիտական ունակությունների և հմտությունների պատճառով Դուք չըմբռնեք կամ մասամբ ըմբռնեք մատուցվող տեսաձայնագրությունների և այլ նյութերի

բովանդակությունը և դրա արդյունքում չկարողանաք դրանք կիրառել: Սակայն դա չի կարող հանդիսանալ ծրագրում նախօրոք ներկայացված բաղադրիչների փոփոխության կամ թերի մատուցման պատճառ և չի կարող համարվել անհամապատասխանելիություն ծրագրի հետ:

Ամեն դեպքում, եթե Ձեր կողմից ներկայացվի նախօրոք ներկայացված ծրագրի և տրամադրված փաստացի նյութերի անհամապատասխանելիություն մեր կողմից կիրականացվի գումարի մասնակի կամ ամբողջական ետվերադարձ՝ ըստ սահմանված ընթացակարգի: Եթե վերահաշվարկի արդյունքում մեր կողմից առկա է ետվերադարձվող գումար, դա կատարվում է ըստ սահմանված ժամկետների:

Վերոնշյալ բոլոր տարբերակների դեպքում մասնակցության դադարեցման մասին պետք է տեղյակ պահել զանգահարելով +374 44 240202 հեռ. համարին և դրա մասին տեղեկացնել ընկերության աշխատակցին: Դադարի օրը համարվում է այն օրը, երբ Դուք տեղեկացրել եք դրա մասին ընկերության աշխատակցին նշված մեթոդով, որից հետո, ստանալով էլեկտրոնային հաղորդագրություն դադարեցնելու վերաբերյալ, այն հաստատում եք էլեկտրոնային նամակի միջոցով:

Եթե առկա է գումարի ետվերադարձ, ապա փոխանցումը Մեր կողմից կատարվում 30 աշխատանքային օրերի ընթացքում: Գումարի ետվերադարձը Մեր կողմից կատարվում է միայն Ձեր կողմից տրամադրված բանկային հաշվեհամարին, որի օգտագործողը համարվում է դասընթացի մասնակիցը, եթե նա չափահաս է: Իսկ անչափահաս մասնակիցների դեպքում ետվերադարձը կարող է կատարվել ծնողներից որևէ մեկի հաշվեհամարին: Եթե մասնակցին ֆինանսավորել է իրավաբանական անձ, ապա ետվերադարձը կատարվում է միայն տվյալ իրավաբանական անձի հաշվեհամարին:

5. Դասընթացների կազմակերպում

Դասընթացները կազմակերպվում են առցանց վեբինարների, նյութերի տրամադրման, ձայնագրված նյութերի տրամադրման, թեստային և գործնական աշխատանքների տրամադրման ձևաչափով: Յուրաքանչյուր դասընթացի անցկացման ձևի վերաբերյալ կայքում կամ կոմունիկացիոն այլ հարթակում առկա է համապատասխան տեղեկատվություն:

Դասընթացին, վեբինարին կամ այլ կրթական միջոցառմանը մասնակիցների քանակը չի սահմանափակվում, միևնույն ժամանակ, հիմք ընդունելով կորպորատիվ գաղտնիքի պահպանման պարտավորությունը Sovorir IT-ն ունի դասընթացին, վեբինարին կամ այլ կրթական միջոցառմանը մասնակիցների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը չհրապարակելու, չտրամադրելու կամ այլ միջոցով չհանրայնացնելու իրավասություն, բացառությամբ ՀՀ օրենքով սահմանված դեպքերի:

Միևնույն ժամանակ Sovorir IT-ի բոլոր այն գործընկերները, ովքեր որևէ եղանակով ունեն համագործակցություն Sovorir IT-ի հետ և տիրապետում են մասնակիցների իրական կամ ցուցադրվող քանակին իրավունք չունեն այդ տեղեակտվությունը որևէ ձևաչափով հրապարակելու, տրամադրելու, այլ միջոցով հանրայնացնելու կամ հասանելի դարձնելու Sovorir IT-ի կողմից չարտոնված երրորդ կողմին:

Եթե Ծառայությունները չեն մատուցվել սահմանված ժամկետում և դրա պատճառը նյութը հաճախորդի կողմից չյուրացնելն է, ապա ավելացվում են դասընթացներ. դա կատարվում է միայն ըստ կարիքի, որը սահմանում է Sovorir IT-ն: Ավելացումները կատարվում են անվճար. տվյալ դասընթացի մասնակիցը չի վճարում ավելացված հանդիպումների համար, միևնույն ժամանակ, եթե նյութը հաճախորդի կողմից յուրացվում է կանխատեսածից արագ, Sovorir IT-ն իրավունք ունի ծրագիրը վերջացնել ժամկետից շուտ, սակայն, միևնույն ժամանակ, պարտավորվում է ապահովել ծրագրում կազմակերպված բոլոր կետերը: Եթե Ծառայությունների տրամադրումը կատարվում է սահմանված ժամկետից շուտ՝ դրա որակի և ծրագրային կետերի պահպանումով, ապա Sovorir IT-ն որևէ մասնակցի որևէ գումար չի վերադարձնում:

Հավաստագիրը տրամադրվում է թվային տարբերակով, իսկ որոշ դեպքերում նաև տրամադրվում է վերջիններիս տպագրված տարբերակը: Թվային տարբերակը ուղարկվում է Ձեր կողմից նշված էլեկտրոնային հասցեին:

Քննությունները կազմակերպվում են վերջին դասընթացից հետո առավելագույնը 70 օրացույցային օրերի ընթացքում, իսկ որոշ դեպքերում յուրաքանչյուր ամսվա վերջին տասնօրյակում որևէ օր, որը նախօրոք սահմանվում և հայտարարվում է մեր կողմից: Քննությունը կազմակերպվում է առցանց տարբերակով: Քննության արդյունքները ամփոփվում են քննության հանձնման պահից առավելագույնը 40 օրացույցային օրերի ընթացքում, որից հետո տրամադրվում է հավաստագիրը, ամփոփումից հետո՝ առավելագույնը 50 օրացույցային օրերի ընթացքում:

Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները կարող են մատուցվել նաև երրորդ անձանց կամ ընկերությունների ներգրավման միջոցով:

6. Մտավոր սեփականություն

Դուք ընդունում և համաձայն եք, որ Կայքում (մյուս հարթակներում) առկա, ինչպես նաև այլ ձևաչափերով մեր կողմից Ձեզ փոխանցվող բոլոր նյութերը (բացառությամբ հաճախորդների մեկնաբանությունների), տեքստերը, ծրագրերը, գրաֆիկական կամ ոչ-գրաֆիկական նկարները, ձայնագրությունները, տեսաձայնագրությունները, երաժշտությունը, տեսահոլովակները, ինտերակտիվ

հնարավորությունները և դրանց նման նյութերը (այսուհետ՝ Նյութեր), ինչպես նաև դրանում առկա ապրանքանիշերը, ծառայությունների նշաններն ու լոգոները (այսուհետ՝ Նշաններ) պատկանում են Sovorir IT-ին, իսկ որոշ դեպքերում նաև իր գործընկերներին, կամ արտոնագրված են նրա կողմից և ենթակա են պաշտպանության որպես հեղինակային իրավունք և մտավոր սեփականության իրավունք՝ միջազգային կոնվենցիաների և ներպետական օրենսդրության համաձայն:

Դասընթացի նյութերը տրամադրվում են միայն Ձեր օգտագործման համար և չեն կարող օգտագործվել, պատճենահանվել, վերարտադրվել, բաշխվել, փոխանցվել, հեռարձակվել, ցուցադրվել, արտոնագրվել, ձևափոխվել կամ այլ կերպ շահագործվել որևէ այլ նպատակով՝ առանց այդ նյութերի սեփականատերերի նախնական գրավոր համաձայնության:

Sovorir IT-ն գրանցված ապրանքանիշ է: Այցելուն և/կամ Օգտատերն իրավունք չունեն օգտագործելու, կրկնօրինակելու, թարգմանելու և/կամ տարածելու Sovorir IT-ի ապրանքանիշն առանց թույլտվության:

7. Անձնական տվյալներ

Sovorir IT-ն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնում է Ձեր անձնական տվյալների մշակում՝ Պայմանագրի կատարման, ինչպես նաև Պայմանագրի պայմաններից բխող այլ գործողությունների իրականացման նպատակով:

Անձնական տվյալների հասանելիությունը կամ Անձնական տվյալների մշակումը սահմանափակված կլինի միայն Մեր կողմից հստակորեն լիազորված անձանց շրջանակով:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, ինչպես նաև երրորդ անձանց և Sovorir IT-ի միջև կնքված պայմանագրերի (աուդիտորական, խորհրդատվական, ծառայությունների մատուցման, ապահովագրության պայմանագրերի կնքման, գովազդային և այլ նպատակներով) համաձայն, Ձեր անձնական տվյալները կարող են փոխանցվել երրորդ անձանց, կամ վերջիններիս կարող է տրամադրվել հնարավորություն օգտվելու այդ տվյալներից:

Սույնով Դուք հավաստում եք, որ ծանուցվել եք Մեր կողմից Ձեր տվյալների մշակման մտադրության մասին, չեք առարկում և տալիս եք Ձեր համաձայնությունը Պայմանագրի համաձայն մշակելու Ձեր վերաբերյալ ցանկացած անձնական տվյալ:

Դուք հավաստում եք, որ մեզ երրորդ անձանց անձնական տվյալների տրամադրման համար այդ կապակցությամբ ստացել եք նրանց համաձայնությունը:

Դուք հավաստում եք, որ Ձեր կողմից տրամադրվել է և հետագայում ևս կտրամադրվի ամբողջական, արժանահավատ և ճշգրիտ տեղեկատվություն,

լիակատար պատասխանատվություն եք կրում տրամադրված տեղեկատվության ճշգրտության և ամբողջականության համար:

8. Հաղորդակցություն

Հրապարակային պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում Հրապարակային պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները, հաղորդակցումը կարող են կատարվել էլեկտրոնային եղանակով՝ Ձեր կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի, Կայքի, մեր Facebook-յան կամ Instagram-յան էջերի, Ձեզ հետ հաղորդակցության պահպանման համար նախօրոք սահմանված հատուկ հարթակների միջոցով (օրինակ Telegram բոտի, խմբի, կամ աջակցման կենտրոնի միջոցով), որը համարվում է պատշաճ ծանուցում:

Տեխնիկական առանձնահատկություններից ելնելով՝ Sovorir IT-ն չի կարող երաշխավորել էլեկտրոնային փոստի հասցեով, բջջային հեռախոսահամարով կամ այլ էլեկտրոնային կոմուիկացիոն միջոցով ուղարկված հաղորդագրությունների ստացումը Օգտատիրոջ կողմից:

9. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանների կապակցությամբ ծագած վեճերը Պայմանագրի կողմերից որևի մեկի կողմից չեն կարող հրապարակվել մինչ դրանց լուծումը: Վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Sovorir IT-ին պատասխանատվություն է կրում Ծառայությունների և/կամ Ապրանքների մատուցման ժամկետների համար և պարտավորվում է կատարել առավելագույնն իր կողմից նշված ժամկետների մեջ կամ դրանից շուտ Ծառայությունները և/կամ Ապրանքները մատուցելու համար:

Ակցիային կամ հատուկ առաջարկներին վերաբերող ցանկացած տեղեկատվություն, որը տեղադրված է Կայքում՝ տրամադրվում է Ծառայություններ մատուցող անձի կողմից, և բոլոր փոփոխությունները համաձայնեցվում են Sovorir IT-ի հետ:

Ծառայությունների կամ Ակցիայի չկայացման դեպքում պայմանագրային հարաբերությունը ավարտվում է Ձեր հաշվեկշռին դրամական միջոցների վերադարձմամբ:

Ներկայացուցիչը, կամ ցանկացած այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը ներգրավված է Կայքի բովանդակության ստեղծմանը, ներառյալ ծրագրային և տեխնիկական ապահովմանը, տեխնիկական անսարքությունների համար պատասխանատու չէ որևէ վնասի՝ այդ թվում ուղղակի, անուղղակի, պատահական և

դիտավորությամբ և այլ կարգի վնասների համար, որոնք կծագեն Կայքի օգտագործումից կամ օգտագործման կարգի չիմացությունից:

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Հրապարակային պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելակել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների կողմից ընդունված ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Հրապարակային պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Պայմանագիրն էլեկտրոնային տեսքով կնքելը՝ իր իրավաբանական հետևանքներով, հավասարեցվում է Sovorir IT-ի և Ձեր ստորագրությամբ գրավոր փաստաթուղթ կազմելու միջոցով պայմանագիր կնքելու իրավաբանական հետևանքներին:

Պայմանագրի ենթակետերը ուժի մեջ են մտնում Օգտատիրոջ՝ գրանցման, պատվերի և նախատեսված վճարը կամ դրա մի մասը, այդ թվում կանխավճարը կատարելու պահից: